# ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Մ. ԻՆՃԻԿՅԱՆ

Թումանյանի կյանքի առաջին տասնամյակը՝ մանկության տարիները անցել են ծննդավայրում, հայրենի հարկի տակ և բնության ղրկում։

«Մանկությունը,— գրել է Թումանյանը,— մարդու կյանքի էն ամենաընդունակ շրջանն է, երբ նա չորս կողմից ընդունում է, սնունդ է առնում ու զարգանում շարունակ... Ամեն բան, ինչ որ շրջապատում է նրան, ինչ որ գոյություն ունի աշխարհքում, սնունդ է նրա համար...»[1]։

Նշանակալի է, որ Շեքսպիրին ու Աբովյանին — իր դրական կյանքի մշտական ուղեկիցներին և ուսուցիչներին — նվիրված ուսումնասիրությունների սեվագիր հատվածներում Թումանյանը հատկապես շեշտել է նրանց մանկական տպավորությունների, ընկալումների կարևորությունը և, անշուշտ, ոչ պատահականորեն, կանգ առել այն գործոնների վրա, որոնք զարմանալի զուգադիպությամբ, հատկանշական են եղել նաև իր մանկության համար. «Շեքսպիրը մեծացել է հասարակ, բավական նախնական պայմաններում։ Հորական տանը որևէ բարձր մտավոր զարգացում նա չի տեսել ու չի առել... Եվ հենց իր աշակերտական շրջանում էլ, հիմք կա ենթադրելու, նա շատ բան սովորել է բնության հետ շփվելուց և իրեն շրջապատող Ստրադֆորդի փոքրիկ աշխարհից, քան ուսումնարանում»[2]։

Իսկ Աբովյանը՝ «Մինչև տասը տարեկան հասակը... մանկությունն անց է կացրել Քանաքեռ՝ իր հայրենի օջախում։ Տեսել ու ապրել է նրա չարն ու բարին, ուրախությունն ու տխրությունը, լավ ու վատ օրը, նրա նահապետական կյանքը, որ այնքան վառ գույներով փռում է իր գրվածում»[3]։

Այս և նախորդ տողերում ասվածը, գրեթե նույնությամբ, համապատասխանում է դրանց հեղինակի մանկությանը, երբ Շեքսպիրն ու Աբովյանը փոխարինենք Թումանյանով, իսկ Ստրադֆորդն ու Քանաքեռը՝ Դսեղով։

Արդ, տեսնենք այն գործոնները, որոնց աղդեցության ոլորտում անցել է Թումանյանի մանկությունը։

Նախ՝ ընտանեկան միջավայրը։

Բանաստեղծի ծննդյան նախորդ տարում (1868) վախճանվել էր նրա հայրական պապը՝ Հովհաննես-աղան, որի հիշատակը, սակայն, երկար տարիներ կենդանի է մնացել Թումանյան ընտանիքում։ Բնորոշ է, որ Հովհաննես-աղայի անունով Թումանյանների տոհմը կոչվել է նաև «աղոնք»[4]։

---

1 Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, Երևան, 1951, էջ 328 (այսուհետև՝ ԵԺ. հատորը՝ հռոմեական, էջերը՝ արաբական թվանշաններով)։

2 ԵԺ, VI, 156։

3 ԵԺ, VI, 279։

4 «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 1, էջ 175 (այսուհետև՝ ՊԲՀ)։

Թումանյան ընտանիքը բազմանդամ է եղել։ Մինչև 1875 թ.՝ բանաստեղծի վեցամյա հասակը, Հովհաննես-աղայի որդիները՝ Ասլանը (Տեր-Թադևոս), Գրիշկան և Մամը՝ իրենց կանանցով և զավակներով միասին են ապրել։ Բանաստեղծի յոթ եղբայրներից ու քույրերից միայն երկուսն էին ծնվել՝ Ռոստոմը և Օլանը։ Ընտանիքն ապրում էր նահապետական սովորություններով և ավանդություններով։ Ինչ վերաբերում է տնտեսական վիճակին, ապա, ցավոք, այդ մասին քիչ տվյալներ են պահպանվել։ Թումանյանը կյանքի վերջին օրերին, մանկական վերհուշերից մեկում, խոսել է հայրական տան աոատությունից ու լիությունից. «Իմ հոր տունը, — պատմել է նա, — շեն տուն էր, առատ, հարուստ... Իմ հերը քիչ բան չէր սիրում առնել. խաղողը բեռներով էր առնում, քիշմիշը՝ խուրջինով։ Նրա ամենափոքր չափը խախալն էր...»[5]։ Խոսքն, անտարակույս, բանաստեղծի մանկության շրջանին է վերաբերում։ Եվ այդ վիճակը կարճատև է եղել։ Հին աղնվական ընտանիքն արագ սկսել է աղքատանալ։ Թումանյանի դպրոցական ընկերները գրեթե միաբերան վկայում են, որ աշակերտության տարիներին նա աղքատ էր ապրում, և որ Ներսիսյան դպրոցից հեռանալու պատճառը տնտեսական աննպաստ պայմաններն են եղել[6]։ Բանաստեղծի եղբայրը՝ Վահանն իր մի նամակում գրում է. «Տեր-Թադևոսը ստանում էր 50 ռ. տարեկան, չէր կարող ուսում տալ բոլորիս»[7]։

Թումանյան տոհմի աղքատացումը և գյուղում ու շրջակայքում նրա ունեցած երբեմնի ազդեցության թուլացումն սկսվում է Հովհաննես-աղայի մահից հետո։ Այն հոլամասերը, որ Հովհաննես-աղան ստացել էր որպես պարգև մարտական սխրագործությունների և ծառայությունների համար[8], հետզհետե դուրս են գալիս Թումանյանների ձեռքից։

Թումանյանի թղթերում պահպանվել է Մեհրաբ Թումանյանի (բանաստեղծի հորեղբոր)՝ 1884 թ. մարտի 28-ի դիմումը Լոռու գավառապետին այն մասին, որ պետական գյուղացիներից մի քանիսը, Դսեղի տանուտերի օգնական Եփրեմ Հովհաննիսյանի և դատավոր Ղազար Դաբիևի դրդումով, ինքնագլուխ սկսել են վարել քառասուն տարուց ի վեր իրեն պատկանող հողերը՝ յուրացնելու նպատակով։ Ըստ երևույթին, դիմումը մնացել է անհետևանք, քանի որ գավառապետի մակագրության համաձայն, հայցվորը պետք է դիմեր գյուղական դատարան, հենց նույն Ղազար Դաբիևին, որի դեմ էր ուղղված նրա բողոքը[9]։ Բանաստեղծի գրած և ստացած մի քանի նամակներից, ինչպես և «Հաղթական ամբոխը» խորագիրը կրող հուշագրական անավարտ երկից[10] երևում է, որ «հողերի խնդիրը» երկար տարիներ եղել է Թումանյաններին հետապնդող և հուզող հոգսերից մեկը։ Սակայն, կենցաղային առօրյա խնդիրներին փիլիսոփայական անտարբերությամբ նայող, նուրբ ու բարի, անգործնական ու խաղասեր Տեր-Թադևոսը չէր, որ պիտի զբաղվեր հողային կնճռոտ վեճերով։

Ընտանիքի եկամուտի աղբյուրների նվազման հետ, աճում էին պարտ-

---

5 Ն վ. Թ ու մ ա ն յ ա ն, Հուշեր և զրույցներ (այսուհետև՝ ՀԶ)։

6 ԳԱԹ, Թա (Արս. Ղլտճյանի, Տ. Փիրումյանի և Հակ. Ստեփանյանի հուշերը)։

7 Թումանյանի ընտանիքի մոտ պահվող արխիվը (այսուհետև՝ ԹԸԱ)։

8 Օլգա Թումանյանի հավաստումը։

9 Գրականության և արվեստի թանգարան, Թումանյանի արխիվ, 1716 (այսուհետև՝ ԳԱԹ, Թա)։

10 «Բանբեր Երևանի համալսարանի», 1968, № 2, էջ 158—161։

քերը։ Տեր-Թագևոսն իր ամբողջ կյանքն ապրել է պարտքերով[11]։ Ինչպես երևվում է Թումանյանի ինքնակենսագրական նոթերից, պարտքեր ունեցել է նույնիսկ Հովհաննես-աղան. «Մեր պարտքատերերը,— կարդում ենք բանաստեղծի գրառումներում, — պապիս պարտքերը՝ ճամփա շինելու, կամուրջ շինելու և այլն»[12]։

Պարտքեր անելու այդ սովորությունը պապից ու հորից, նրանց նկարագրի բնորոշ այլ գծերի հետ, ժառանգաբար անցել է բանաստեղծին։

Թումանյանի մանկական հիշողություններն սկսվում են գրեթե «ոտն ելնելու» շրջանից։ Իսկ նա, ինչպես ինքն է գրում, շատ վաղ է «ոտն ելել», «սովորականից շատ վաղ»[13]։

«Տերսանց» կամ «աղոնց» նահապետական բազմաճյուղ ընտանիքի մեծ և փոքր անդամները՝ պապը (մայրական կողմի), տատերը, հորեղբայրներն ու քեռիները, սրանց կանայք, որդիներն ու հարսները, ծառայողները (այգեպանը, ջրաղացպանը, տավարածը), յուրաքանչյուրն իր նկարագրի բնորոշ կողմերով ու սովորություններով, անջնջելի դրոշմվել են ապագա բանաստեղծի հիշողության մեջ, կազմելով մարդկային գունագեղ կերպարների մի հարուստ պատկերասրահ, որ իր ամբողջ փայլով ու հմայքով պիտի հանդես գար Թումանյանի նախագծած «Ինքնակենսագրության» մեջ։ Դրանցից յուրաքանչյուրի անունը, որևէ դեպքի առնչությամբ, հիշատակված է չիրականացված այդ մտահղացման ծրագրային նոթերում[14]։

Չնայած բանաստեղծի մայրական և հայրական պապերը սոցիալական տարբեր խավերի էին պատկանում («Մինը ազնվական տուն, մյուսը՝ սարբցու»), սակայն Թումանյանի մանկության տարիներին այդ տարբերությունը վերացված էր, մնացել էին սոսկ հիշողություններ։ Հորեղբայր Մամը համարվում էր գյուղի «առաջին» (առաջնակարգ) մաճկալը, իսկ քեռիները քաջ որսորդների և հովիվների համբավ էին վայելում[15]։

Թումանյանի մանկության տարիներին Դսեղն ապրում էր փակ տնտեսության պայմաններում, նահապետական կենցաղով, ավանդական «ադաթներով» ու սովորություններով։

Նահապետականության նկատմամբ բանաստեղծը դրսևորել է երկակի վերաբերմունք. եթե մի կողմից պատկերել է հնավանդ, քարացած «ադաթների», խավարի, սնոտիապաշտության կապանքներում թպրտացող մարդու ցնցող ողբերգությունը («Սարոն», «Լոռեցի Սաքոն», «Անուշ»), ապա մյուս կողմից պանծացրել է՝ բուրժուական «քաղաքակրթության» կեղծիքին, այլասերող կարգերին ու բարքերին անհաղորդ, բնության անաղարտ զավակների նահապետական պարզությունը, ազնվությունը, անմիջականությունը.

Որքա՜ն սիրել եմ, չքնաղ հայրենիք,
Քո սար ու ձորում մեծացած մարդկանց
Սովորությունքը պարզ ու վայրենի —

---

11 Թումանյանի եղբոր՝ Ռոստոմի 1898 թ. ապրիլի 1-ի նամակը։ Տե՛ս ԹԸԱ։
12 ՊԲՀ, 1966, № 1, էջ 179։
13 Նույն տեղում, էջ 175։
14 Նույն տեղում։
15 ՊԲՀ, 1966, № 1, էջեր 175, 179։

Ատելը անկեղծ, սիրելը սրտանց.
Երբ որ միասին զվարճանում են
Իրանց օջախում, թեկուզ չոր հացով,
Միասին վարում, միասին ցանում են,
Միխիթարվում են մի բախտի հուսով...[16]

Տեր-Թադևոսը պահպանում էր «աղոնց» նահապետական տան ավանդույթները, հատկապես հյուրասիրությունը։ Թումանյանի ինքնակենսագրական նոթերում այդ հանգամանքը ընդգծված է տարբեր էջերում. «Ղոնախներ... միշտ ղոնախներ... Մեր հարսներն[17] ու մայրս դերի մեր հյուրերին»[18]։

Բանաստեղծը ևս, ինչպես հայտնի է, հետագայում շարունակեց հայ նահապետական ընտանիքի, մասնավորապես Թումանյան գերդաստանի համար բնորոշ այդ սովորույթը։

Մանուկ Թումանյանի առաջին հոգևոր սնունդը եղավ ժողովրդական բնարվեստը, դրեթե իր բոլոր ժանրերով՝ պատմական ավանդություն, լեգենդ, հեքիաթ, առակ, երգ, առած, ասացվածք... «Էն գլխից, ոչ «դիպվածով», սիրել և հետաքրքրվել եմ հեքիաթներով, լեգենդներով, առակներով, և շատերն անգիր գիտեմ դեռ մանկուց», — հավաստում է բանաստեղծը։

Ժողովրդական էպոսի ժանրը ներկայացնում էին «Լոռու հին-հին քաջերի» սխրագործությունների մասին հյուսված ասքերը, որ դեպքերին ականատես ծերերը, նորանոր երանգավորումներով, պատմում էին[19] ձմռան երկար գիշերները օջախի առաջ նստոտած լոռեցիներին, որոնց հետ եղել է նաև ապագա բանաստեղծը։ Այդ ասքերի գլխավոր հերոսները Թումանյանի նախնիներն էին՝ Մեհրաբ և Օվակիմ յուզբաշիները և Հովհաննես-աղան։

Հիշյալ դյուցազներգական պատմությունների հեղինակ-ասացողները ոչ միայն գյուղի ծերերն էին, այլև բանաստեղծի տատերը (հատկապես Հովհաննես-աղի կինը), ինչպես նշված է ինքնակենսագրական նոթերում[20] և «Դարձ» անավարտ պոեմի մի սևագիր հատվածում.

....Եվ նստած իրան տատերի գոգում
Ականջ էր դրել նրանց հեքիաթին,
Կամ ինչպես իրան պապերն աննկուն
Պատերազմել էին,
Ախոյան էին կանգնել հավատին։

---

16 ԵԺ, II, 320։

17 Քանի որ այս գրառումները վերաբերում են Թումանյանի մանկական տարիներին, ապա, ուրեմն, «հարսներ» ասելով, նկատի ունի իր հորեղբայրների կանանց։

18 ՊԲՀ, 1966, № 1, էջեր 175, 176, 183։

19 «Գովասանական բանիւք պատմեն ականատեսքն...», — վկայում է Ռոստոմ բեգ Երզընկյանցը, համառոտակի նկարագրելով Օվակիմ յուզբաշու և լոռեցի մյուս հերոսների քաջագործությունները («Հնախօսական նկարագրութիւն Հաղբատայ աշխարհահռչակ վանից սրբոյ Նշանի...», Վաղարշապատ, 1886, էջ 130)։

20 ՊԲՀ, 1966, № 1, էջ 176—177։ Ըստ Նվ. Թումանյանի, բանաստեղծի մայրը ևս պատմելիս է եղել «Օվագիմ Յուզբաշուց և նրա քաջագործություններից... Հասան խանի օրերից, ինչպես Լոռվա գյուղերի բնակչությունն այդ ժամանակները գյուղերից վախած, ահ ու սարսափի մեջ, պատսպարվել է այրերում»։ Ն. Թ ու մ ա ն յ ա ն, Հովհաննես Թումանյան։ Մանկություն և պատանեկություն, Երևան, 1955, էջ 38—39 (այսուհետև՝ ԹՄՊ)։

Ականջ էր դրել Սուրենն,
Երբ որ իրանց հին սրահի առաջ
Հավաքվում էին ծերերը մռայլ
Եվ զրույց անում անցած օրերից...
Եվ նա հիշում էր
Խաղաղ իրիկունն յուր հայրենիքի,
Երբ որ աստղածին երկնքի տակին...
Եվ լուսնի դիմաց պատմել էին նրան
Ավանդություններն իրանց աշխարհքի...[21]

Թումանյանի հիշողություններում առմիշտ գրոշմվում են մանկության տարիներին ու հետագայում լսածները Լոռու անցյալի և հերոսների, այդ թվում իր քաջակորով նախնիների մասին։ Դրանք ընդհանրացնելով և վերիմաստավորելով, բանաստեղծը հետագայում հյուսել է մի ամբողջ զրուցաշարք։ Դեմիրճյանը վկայում է, որ Թումանյանը «հաճախ էր պատմում լոռեցիների հիշողությունների մասին, որոնց նյութը լեզգիների արշավանքներն էին եղել։ Լոռեցիների պատմելու սերը այն աստիճան զարգացած է եղել, որ նրանք ավանդաբար պահել են աղոտ հիշողություններ անդամ թաթարների արշավանքներից։ Լեզգի հրոսակների դեմ մղած կռիվների նկարագրություններով Թումանյանը պահում էր մեզ իր մոտ մինչև կես գիշեր և ավելի։ Այդ պատմությունների մեջ առանձին տեղ էր գրավում նրա մեծ պապ Օվակիմ Յուզբաշին...»[22]։

1921 թ. ապրիլին, Երևանից վերադարձին, երբ Ղարաքիլիսայում Թումանյանին ընկերանում է Ստ. Զորյանը, բանաստեղծը ժամանակի քաղաքական իրադրության առնչությամբ վերհիշում է լոռեցիների պատմական սխրագործությունները։

«Խոսք բացեց, — գրում է Զորյանը, — այն հերոսական կռիվների մասին, որ մի ժամանակ վարել էր Լոռու գյուղացիությունը պարսիկների ու լեզգիների դեմ։ Այդ պատմությունները մեկը մյուսից հմայիչ էին այնպես, ինչպես միայն Թումանյանը գիտեր պատմել՝ համով ու կենդանի...»[23]։

Ինչպես Լոռու պատմական անցքերի շուրջը հյուսված ասքերին, այնպես էլ ժողովրդական բանարվեստի մյուս տեսակներին Թումանյանը հաղորդակցվել է անմիջական աղբյուրից՝ ասացողներից, որոնք եղել են բանաստեղծի հարազատները, ազգականները, ընկերներն ու համագյուղացի ծերունիները։ Կենդանի պատմական հիշատակարաններ հանդիսացող այդ ծերերին Թումանյանը հանդիպել և հետները զրուցել է նաև հետագայում։ «Բորչալվում» ուղեգրություններում նա նկարագրում է հարյուրամյակը գլորած երկու եղբայրների, որոնցից մեծը պատմում է «Պասկևիչից, Լիսանևիչից, Երևանու պատերազմից»։

---

21 «Թումանյան։ Ուսումնասիրություններ և հրապարակումներ», I, 1964, էջ 302 (այսուհետև՝ ԹI)։

22 ԳԱԹ, Թա։ Թումանյանի արխիվում պահպանված երկու սևագրություն վկայում են նրա ձգտումը գեղարվեստորեն վերարտադրելու լեզգի ասպատակների դեմ հայ ժողովրդի մղած պայքարի դրվագները։ Դրանցից մեկը անխորագիր մի պատմվածք է, մյուսը՝ «Զի Աստուած ընդ մեզ է» լեգենդը։ Եթե առաջինի հիմքը լոռեցիների մեջ պահպանված հիշողություններն են, ապա երկրորդի աղբյուրը պատմա-ավանդական է։

23 Ս տ. Զ ո ր յ ա ն, Երկերի ժողովածու, հ. 10, էջ 45։

«Այսպիսի ծերեր պատահում էին մեզ գրեթե ամեն գյուղում, — շարունակում է բանաստեղծը։ — Սրանց ամեն մեկը ավանդությունների, առասպելների, հին զրույցների, ժողովրդական հավատալիքների մի շտեմարան, մի թանգարան է։ Այս պատմություններից, զրույցներից, սովորություններից շատերն եկած են հին դարերից, մեր հին նախնիքների կյանքն ու սովորություններն են, նրանց մտքի և հոգու ծնունդներն են։ Բայց մեռնում են այս ծերունիները, իրանց հետ տանելով իրանց գիտեցածը... Ես ինչ խոսքեր, դարձվածքներ, զրույցներ սրանից 10 տարի առաջ (ուրեմն՝ 14—15 տարեկան հասակում — Ա. Ի.) լսել եմ Լոռի, ինչ սովորություններ տեսել եմ, այժմ դժվար եմ տեսնում ու լսում. բոլորը նսեմացել, նոսրացել, անհետանում են»[24]։ Ցավոք, դրանցից միայն մի քանիսի անուններն են մեզ հասել։ Հեքիաթասացներից Թումանյանը հիշատակել է՝ Թագուհուն (հորեղբոր կինը) և իր ընկեր Նեսոյին[25], Ղոխնանց պապին (վերջինս գյուղում այգեպան է եղել. «Հառաչանք» պոեմի ծերունու նախատիպը)[26]։

Թումանյանի մանկության շրջանի հեքիաթասացներից առանձնանում է ամենակրտսերը՝ Նեսոն, բանաստեղծի խաղընկերը, ստեղծագործական վառ երևակայությամբ և վիպելու շնորհքով օժտված մի գեղջուկ պատանի։

«Մի խումբ ընկեր երեխաներ էինք։ Գյուղացի երեխաներ, — պատմում է Թումանյանն իր հեքիաթասաց ընկերոջը նվիրված պատմվածքում. — Իրիկուններն... հավաքվում էինք, ծիծաղ բաներ ասում կամ հեքիաթ պատմում։

Մի ընկեր ունեինք, անունը Նեսո։ Էնքա՜ն հեքիաթ գիտեր, էնքա՜ն հեքիաթ գիտեր, որ ոչ ծեր ուներ, ոչ տուտ։

Ամառվա լուսնյակ գիշերները մեր դռան գերանների վրա շուրջբոլոր նստոտում էինք, հիացած պլշում Նեսոյի՝ ոգևորությունից դեղեցկացած դեմքին։ Ու պատմում էր նա հուրի փերիներից, Զմրուխտ Ղուշից, Լիս ու Մութ աշխարհից...»[27]։

Գիքորի նման, Նեսոն ևս դժբախտանում է, բայց տարբեր միջավայրում և հանգամանքներում. «չքավորությունը — բանաստեղծի բնորոշմամբ — այդ հոգու և սրտի ահռելի ավազակը»[28] սպանում է նրա բնածին տաղանդը և այլասերում։

Թումանյանն առանձնապես սիրել է ժողովրդական լեգենդներն ու բալլադները՝

Որոնք, ինչպես հեռու ձայներ,
Կանչում են, որ ականջ դնենք,
Ու խոսում են պա՜րզ, մանկաբար,
Որ հազիվ է մարդ որոշում —
Ե՞րգ է արդյոք, թե պատմություն...[29]

Առակախոս ծերերից բանաստեղծն հիշատակել է բոստանչի Մելքոնանց Օհաննեսին[30] և իր քեռիներին, հատկապես Քեռի Իսայուն, որի պատմած ա-

24 ԵԺ, VI, 64—65։
25 ՊԲՀ, 1966, № 1, էջ 176։
26 Տե՛ս նույն տեղում, էջ 184 («Իմ մի քանի դրվածքների բացատրությունը») և ՀՁ։
27 ԵԺ, III, 117։
28 Նույն տեղում, էջ 376։
29 Լոնգֆելլոյի «Հայավաթի երգը» պոեմի թարգմանությունից (ԵԺ, II, 217)։
30 ՊԲՀ, 1966, № 1, էջ 179։

ռակների հիման վրա է գրել «Շունն ու կատուն», «Անբախտ վաճառականները» և «Արծիվն ու կաղնին»[31]։

Իսկ հորեղբայր Մամից, որ գյուղի առաջին մաճկալն էր համարվում, լսել է Լոռու հորովելները, սայլերգերն ու կալերգերը[32]։ Եվ, անշուշտ, «Գութանի երգը», «Կալի երգը» (լոռեցոնց), «Կալի երգը» (ժողովրդական), «Գութան» բանաստեղծությունները գրված են իր նշանավոր մաճկալ հորեղբոր երգերի ներշնչմամբ։

Մանուկ Թումանյանի հիշողության մեջ տպավորվել են նաև 70-ական թվականներին ընդհանրացած ազգային-հայրենասիրական և հոգևոր երգերը, որոնցից մի քանիսը, ինչպես երևում է բանաստեղծի ինքնակենսագրական նոթերից, եղել են առաջին նմուշները այդ ժանրի ստեղծագործություններից (ընդհանրապես առաջին գրական երկերը), որոնց նա հաղորդակցվել է. «Իմ առաջին երգերը. Վարդան փեսեն[33]. «Է՞ր հեռանաս...», «Հայրենիք սրբազան...», «Ազնիվ ընկեր...»։ Պապիս երգը. «Առավոտ լուսո»[34]։ Ըստ Նվ. Թումանյանի, դրանցից առաջին երեքը, ինչպես և «Ճախարակը» և արևելյան եղանակները, երգելիս է եղել նաև նանը՝ Թումանյանի մայրը[35]։ Ինքնակենսագրական մի այլ պատառիկում հիշատակություն կա «Կիլիկիայի» մասին. «Մանկությանս նոր երգ էր դուրս եկել. երգում էի ես եղբորս հետ, զիլ ձայնով. «Երբ որ բացվին դռներն հուսո...»։ Ու չէի հասկանում, թե ինչ եմ երգում։ Նոր եմ հասկանում»[36]։

Ուժեղ տպավորություն են գործել բանաստեղծի վրա հոր՝ Տեր-Թադևոսի երգն ու նվագը, երբ նա «իրիկունները... թինկը տված՝ ածում էր իր չոնգուրն ու երգում Քյորօղլին, Քյարամը, կամ որևէ հոգևոր երգ»[37]։

Ժողովրդական ասքերն ու պատմական ավանդությունները, հեքիաթներն ու լեգենդները, առակներն ու հորովելները, հայրական չոնգուրն ու հովվական սրինգը, ինչպես և հայրենասիրական ոգնշունչ երգերը, լինելով Թումանյանի առաջին հոգևոր սնունդը, միաժամանակ դառնում են նրա գեղարվեստական մտածողության զարգացման առաջին ազդակները, այն գործոնները, որոնք նպաստում են նրա ստեղծագործական ձիրքի հայտաբերմանը՝ դեռ պատանեկան հասակում։

*

Թումանյանի, որպես բանաստեղծի, ձևավորման համար խոշորագույն ազդակ է հանդիսացել Լոռու հեքիաթային ու վիպական բնությունը։ Դսեղը, ուր ծնվել է նա և անցկացրել է իր մանկությունը, մի լեռնային թերակղզի էր «անառիկ ու չքնաղ գիրքով մի բնակերտ ամրոց»[38], շրջապատված երկնահուպ լեռներով ու անգնդախոր ձորերով, թավուտներով ու անտառներով։

---

31 Տե՛ս նույն տեղում, էջ 183 («Իմ մի քանի գրվածքների բացատրությունը»)։

32 Նույն տեղում, էջ 179։

33 Թումանյանի հորաքրոջ՝ Սոնայի ամուսինը։

34 ՊԲՀ, 1966, № 1, էջ 176 (այստեղ աղավաղված՝ ...«Առավոտ նկավ» բ՝ագրում՝ «Առավոտ լուսո»)։

35 ԹՄՊ, 38։

36 ԹԸԱ։

37 Նա, IV, 85։

38 Նա, III, 25։

Հայրենի բնությունը Թումանյանի համար եղել է մի վիթխարի դպրոց՝ բաց երկնքի տակ։ Նա ընթերցել է բնության գիրքը (ըստ Վալտեր Սկոտի՝ «մեծագույնը գրքերից»), դասագրքից առաջ։

Ինքնակենսագրական նոթերից երևում է, թե բնությունը ինչքան մեծ տեղ է գրավել բանաստեղծի մանկական տպավորությունների մեջ։ Թումանյանը ուրվագծերով, երբեմն՝ չավարտված նախադասություններով, հիշատակել է իր սիրած վայրերը, բնության երևույթները, տեսարանները, կենդանիները... Մենք կարևոր ենք համարում, կենսագրական այլ փաստերից առանձնացնելով, իրար կողքի բերել բնության առաջին ընկալումներին վերաբերող նրա գրառումները, որոնք, սոսկ ծրագրային նոթեր լինելով հանդերձ, ներկայացնում են բանաստեղծի մանկության մի կարևոր դրվագի ընդհանուր, բայց վավերագրական նկարագիրը.

«...Սարում։ Հացուտ։
Երկինքը...
Գառնարած — Նիկալի հետ։
Կենդանիները. մեր եղները։ Ես եզնարած։
Դըդի գլուխը...
Աղբյուրը նրա տակ, որ էլ չկա։
Անտառները, ծառերը — չկան։
Քարափներ բարձրանալը...
Գիշերներն ու աստղերը...

Գիշերները լռության մեջ միշտ ականջ էի դնում Դեբեդի ձենին, որ գալիս էր խոր ձորից, երբեմն խուլ ու խոր, երբեմն պարզ ու ահավոր։ Եվ կարծես խոսում էր հոգուս հետ։

Ինչքա՜ն էի սիրում առավոտը աքաղաղների ծուղրուղուն, գիշերը՝ շների հաչոցը։

Կարմիր էրում (քարայր — Ա. Ի.). բարձրից աշխարհքը... Ճերմակ ամպերը, որ հազար ու մի ձև առնելով, փոփոխվելով, պտտվում են մեր երկրի շուրջը և մենք ենք կենտրոնը։

Մեր ձորերն անտառապատ, ղուզղունները՝ մեծ քանակությամբ։

Սար<...>Շվին, խաղը, բայաթին։ Հանկարծակի փոթորիկը, հեղեղը, կայծակներն ու գողի վրա տալը։

Աղջիկ փախցնելը։

Իբրև հին, կարոտ մտերիմներ հիշում եմ մեր պոզատ գոմեշը, Սաղարը, Նազլուն, Ծաղիկը, Ջերքեզը, Թոբլան շունը, Ղայթարը, իմ պապոնց, մեր Մարինոս էշը և մեր սև Մաշկոն, որ պասլս էր հետը բերել Ռուսաստանից։

Ծառերն ու անտառները, քարերը։

Քոշաքարից<...>։ Հեղեղի և կայծակի սերը — մինչև հիմա։

...Դեբեդի վշշոցը, աստղալի երկնքի տակ քնելը և հանդերում մենակ կանաչում պառկելը, ժամերով երկնքի մեջ խորասուզված հայացքով...

Իմ մանկությունը անց է կացել մի աստվածային շռայլության մեջ։ Լոռու գեղեցիկ բնությունը, անմահական օդը, զրգռուն աղբյուրների ջուրը, լեռնական գյուղական կյանքի ազատությունը, էն հավասարությունը, որ կար հին գյուղական կյանքում, ամենքն էլ մի տեսակ էին ապրում, ուտում, խմում, ու իրար հետ...

Դեռ լեռնային մեր անկյունը չէր հասել կուլտուրան, իր տենդը։

Մի էս տեսակ աշխարհք եմ կորցրել ու բնությունը զրկվել է իր նախկին պատկերից—երկրագործը, նահապետը ու հովիվը. մարդիկ էլ դարձել են դուքանչի...»[39]։

Վերջին տողերը հայտաբերում են Թումանյանի բնապաշտության սոցիալական բովանդակությունը, նրա իդեալը՝ մարդու և բնության ներդաշնակությունը։ Լոռու կուսական բնությունը Թումանյանին առժամ փոխադրում էր մարդկության մանկության շրջանը՝ նահապետականության և հերոսականության ժամանակները, ուր, իրոք, «ազատ էր՝ ազատ բնության որդին»[40]։ Անաղարտ բնություն և անաղարտ, նահապետական մարդկային հարաբերություններ՝ ի հակադրություն ամեն ինչ քայքայող և աղճատող կապիտալիզմի, որ բանաստեղծն արտահայտել է «դուքանչի» բառով։

Այս իմաստով է նա ասել, թե «բնությունից հեռացողը դժբախտանում է»[41]։ Եվ այդ հայացքի գեղարվեստական մարմնավորումը նրա սքանչելի «Դիքորն» է։ Պատահական չէ, որ Թումանյանի մի քանի լեգենդներում հալածվածներն ու դժբախտները ապավեն են գտնում բնության մեջ, թռչուն դառնալով՝ խորթ մորից հալածված որբերը («Պողոս-Պետրոս»), թուրք առևանգողներից հետապնդվող հայուհին («Որբը»), աշխարհակալ Լենկթեմուրի հայ գերիները («Աղավնու վանքը»), և կամ անմուրազ մեռած աղջկա մոխրացած սիրտը վերածվում է խաշխաշի ծաղկի, որպեսզի սիրած տղան նրանով արբի և «էս կոշտ ու կոպիտ կյանքից հեռացած»՝ ապրի երազներում («Աղջկա սիրտը»)։

Այդ լեգենդներն ստեղծողը՝ ինքն էլ, երբ անհարազատ իրականության մեջ ծանր պահեր է ապրել, բուռն կարոտով ձգտել է դեպի հայրենի բնությունը, մանկության վայրերը՝ իր հին ծանոթների մոտ սփոփանք գտնելու։

Լեռնե՞ր, ներշնչված դարձյալ ձեզանով,
Թրնդում է հոգիս աշխուժով լրցված,
Ու ջերմ ըղձերս, բախտից հալածված,
Ձեզ մոտ են թռչում հախուռն երամով։

Հայրենի լեռնաշխարհի բնապատկերներով է ոգեշնչված՝ բնությունը, տիեզերքն ընդգրկելու, բնության, տիեզերքի հետ ձուլվելու, նույնանալու՝ Թումանյանի ձգտումը, ինչպես և նրա տենչը՝ դեպի Անհունը, դեպի Վեր, դեպի Բարձրը, որ խորհրդանշում են բանաստեղծի հասարակական և գեղագիտական իդեալը։

Հետաքրքրական է, որ Թումանյանն ինքնակենսագրական նոթերից մեկում նշել է, թե, ըստ Լ. Տոլստոյի, որոնք են երջանկության պայմանները. «Ընտանիք, հաղորդակցվելը մարդկանց հետ, բնության հետ, աշխատանք և հավատ»։ Թումանյանն, անկասկած, համերաշխ է ռուս մեծ գրողի հետ, եթե բացառենք վերջին կետը, և ընդունենք, որ հավատի խնդրում նա հանգել էր պանթեիզմին։

---

39 ՊԲՀ, 1966, № 1, էջ 175—183։

40 Ընդգծված բառերը «Լոռեցի Սաքոն» պոեմի առաջին տարբերակից են բերված (ԵԺ, II, 299)։

41 Ստ. Զորյան, Երկերի ժողովածու, հ. 10, էջ 47։

Նույն թերթիկում իր վերաբերմունքը մանկության նկատմամբ բանաստեղծն արտահայտել է բիբլիական դրախտի պատկերով՝ հակադրելով այն (մանկությունը) նրանից հետո ապրած կյանքին[42]։

Հայրենի բնության և մանկության կարոտը Թումանյանը բուռն կերպով ապրել է ճակատագրական հիվանդության ժամանակ, հատկապես վերջին ամիսներին։ Վերհիշել է սարերն ու ձորերը, թավուտներն ու անտառները, շառաչուն Դեբեդն ու սառնորակ աղբյուրները, և ցանկություն է հայտնել, որ իր աճյունը ամփոփվի հայրենի գյուղի բլրակի՝ Դրդի ուսին, ուր անց է կացրել մանկության լավ օրերը...

Թումանյանի ստեղծագործությունների, ինչպես և թարգմանական երկերի շատ էջեր ներթափանցված են բնության, մանկության և տան կարոտով՝ «Մանկություն», «Նախերգանք», «Հիշողություն հայրենիքից», «Մի հառաչանք», «Տխուր գրույց», «Պատրանք», քառյակների մի շարք («Հիմի բացե՞լ են հանդես...», «Ե՛տ եկե՞ք ..», «Ո՞վ է ձեռքով անում, ո՞վ...», «Աշնան ամպին ու զամպին...», «Կլթացնում են, արտորում...», «Արևելքի եղեմներին իջավ պայծառ իրիկուն...»), «Անուշի» առաջին երգի 1, 2, 3 հատվածները։ «Անուշն» էլ սկսվում է հայրենի բնության, մանկության օրերի և հարազատ դեմքերի ոգեկոչումով, ասոցիացիայով[43]։ Թարգմանություններից՝ «Մծիրի» (Լերմոնտով), «Մանուկներին» (Լոնգֆելլո), «Ամենից լավ տունը» (անգլիական), «Լերանց շարքերը» (Գյոթե), «Մի երգ կա մանկուց» (Ռյուկկերտ), «Փոքրիկ ձկնորսը» (Ճապոնական հեքիաթ)։

Իսահակյանը Թումանյանի հայրենի բնաշխարհը համարում է նրա ստեղծագործության տարերքը, բովանդակությունը և արվեստը պայմանավորող գործոններից մեկը. «Լոռին, — գրում է նա, — նահապետական մի ինքնամփոփ աշխարհ է. հեքիաթի, ռոմանսի մի վիպաշխարհ, գյուղացնական աշխարհ.. նրա ամեն մի անկյունը՝ ավանդավեպ, ամեն մի քարը՝ խոսող հերոսական անցյալից... Գյուղացնական-նահապետական Լոռին իր շքեղ բնությունով, իր ավանդներով ու սովորույթներով, նրա հինավուրց ժողովուրդն իր կենսահաստատությամբ, իր ցավերով, նաև իր պայքարով՝ ապատության և երջանկության համար, եղան Օհաննեսի ներշնչարանը. Այստեղից է հորդահոս գալիս Օհաննեսի ստեղծագործության աննախընթաց ժողովրդայնությունը...»[44]։

---

42 «Ես երբ հիշում եմ իմ մանկությունը և նրանից հետո կյանքը—խորապես հասկանում եմ և հավատում դրախտի գոյությանը՝ Ադամի դրախտային կյանքին և դրախտից արտաքսվելուն»։ (ԹԸԱ)

43 Առաջին երգի նշված հատվածների սևագիր տարբերակների առատությունը վկայում է բանաստեղծի ձգտումը՝ գտնել առավել արտահայտիչ բառեր ու պատկերներ՝ հայրենի բնության և մանկության հարազատների կարոտը դրսևորելու համար։ Միայն 64-րդ տողը («Բայց եկեր եմ ես՝ նրանց եմ կանչում») ունի ութ տարբերակ՝

ա Բայց ես կարոտած — նրանց եմ կանչում։
բ Սակայն ես դարձյալ նրանց եմ կանչում։
գ Սակայն ես եկել — նրանց եմ կանչում։
դ Բայց ես տակավին — նրանց եմ կանչում։
ե Բայց մնում են դեռ իմ սրտի միջում։
զ Բայց ապրում են դեռ իմ սրտի միջում։
է Չեն անցել սակայն իմ սրտի միջում։
ը Բայց ես վերոտին ուզում եմ ապրել։ (ԵՀ, II. 372)։

44 Ա վ. Ի ս ա հ ա կ յ ա ն, Երկեր, հ. IV, էջ 79, 81։

Թումանյանի ավագ և կրտսեր ժամանակակիցները՝ Լեոն, Իսահակյանը, Զորյանը, որոնք բանաստեղծին տեսել են նրա բնօրրանում, հավաստում են նրա անօրինակ, հզոր սերը հայրենի բնության հանդեպ. «...Լոռում Օհաննեսն իր տարերքի մեջ էր, — գրում է Իսահակյանը։ — Այս հոյակապ բնության մեջ, այս՝ ավանդություններով, առասպելներով, հիշատակներով լի չքնաղ սարերում ու ձորերում նա բազմապատկվել էր կյանքով...

Օհաննեսն իր բոլոր հոգով, իր հոգու բոլոր կրքով, ու կրակով սիրում էր Լոռին։

Այս հզոր սերը բոցավառեց, թևավորեց նրա երևակայությունը, գեղեցկացրեց նրա ստեղծագործությունները...

Եվ ինչպե՞ս Թումանյանը ներդաշնակվում էր Լոռու պեյզաժին՝ բնանկարին. նրա մարմնից մարմին առած, նրա հոգուց հոգի առած...

Նա Լոռին սիրում էր այնպես, ինչպես սիրահար, ռոմանտիկ պատանին սիրում է իր երազների կույսին»[45]։

Հայրենի բնաշխարհի, ժողովրդի և նրա բանարվեստի հետ «էն դլխից» հաստատված սերտ կապը Թումանյանի արվեստի փիլիսոփայության հիմքն է կազմում։

Կարելի է ասել, որ Թումանյանի պանթեիզմն էլ սկսել է սաղմնավորվել պատանեկության օրերից, երբ նա, ինչպես ինքն է խոստովանում, հանդում ու սարում, երեսն ի վեր պառկած՝ ժամերով հայացքը խորասուզել է երկնքի մեջ և երազել...[46]։

Բնությունը Թումանյանի ստեղծագործական ներշնչումների անսպառ աղբյուրն է, նրա արվեստի «զինանոցը»։ Չայկովսկու հետ նա կարող էր հավաստել, թե՝ «Բնության հայեցությունից ստացած ոգեշնչումն ավելի բարձր է, քան արվեստի»։ Բնությունը Թումանյանի ստեղծագործության և՛ օբյեկտն է, և՛ սուբյեկտը։ Այն սոսկ «ֆոն» ու «շրջանակ» չէ, գործողության վայր չէ, այլև «գործող անձ», մարդկային ճակատագրին ու վշտին կարեկից։ Բնությունն անձնավորվում է նրա և՛ քնարական, և՛ վիպական երկերում. վիշտ, կարոտ, սեր երգելիս ոչ միայն ինքն է դիմում բնությանը, խոսում նրա հետ («Զորե՞ր, ա՛յ ձորեր, սև, լայնաբերան...», «Ջա՞ն, հայրենի ծըղրիդներ...» («Ջա՞ն, հայրենի անտառներ...»), այլև իր հերոսները՝ Սարոն («Բարձր սարեր, ա՛յ սարեր...»), Անուշը («Դուք էլ, սարի սիրուն ծաղկունք...»)։

Հայրենի բնաշխարհը եղել է ակունքը բանաստեղծի ոչ միայն «վսեմ հաճույքի», այլև վշտի, «սև թախիծի», որ նրան անբաժան ուղեկցել է վաղ մանկությունից։ Տրտմությունը եղել է նրա մանուկ օրերի «վեհափառ դայակը», որ «այնժամ էլ» հանգիստ չի տվել՝ «սրտի ականջին խոսելով թաքուն» («Նախերգանք»). թախիծը նրա հոգու մեջ է մտել մայրական մելամաղձոտ օրորոցային երգերի հետ («Տխուր զրույց»՝ «Տխուր գիշեր» բանաստեղծության առաջին տարբերակը)[47]։ Ուշագրավ է, որ երկու բանաստեղծության մեջ էլ վիշտը

---

45 Ավ. Իսահակյան, Երկեր, հ. IV, էջ 80—82։

46 ՊԲՀ, 1966, № 1, էջ 183։

47 Այս բանաստեղծության առաջին տարբերակը Թումանյանը չի ղետեղել իր ժողովածուներից ոչ մեկում, նկատի ունենալով նրա ինքնակենսագրական ենթատեքստը՝ մեջ ենք բերում որոշ կրճատումներով։

անձնավորված է. երկրորդում հեղինակը նրան կոչում է «կյանքի անբաժան ընկեր» և զրույց է վարում հետը՝ պայդելու իրենց մտերմության վաղեմիությունը։

— Ասա՛, իմ վիշտ, իմ սև թախիծ,
Ա՛յ անբաժան կյանքիս ընկեր,
Դու ո՞ր օրից կամ որտեղի՞ց,
Ի՞նչ դեպքով ես ինձ հետ ընկել...
Եվ նա տխուր սրրտիս խորքից,
Մեկ-մեկ հիշում, պատմում է ինձ։

— Է՛, շատ վաղուց, դու չես հիշում,
Մայրդ՝ նստած օրրանիդ մոտ՝
Մեղմիկ լալով երգ էր ասում,
Տխուր «նանիկ» մելամաղձոտ,
Որ տակավին չես մոռացել.
Նրա հետ եմ սիրտդ մրտել...

Է՛, շատ վաղուց. — փոքր էիր դու,
Այդ քու փոքրիկ տրդի նման,
Մի խաղընկեր ունեիր թույլ.
Որբ տղա էր. ողջն էլ նրրան
Ծեծում էին ու խենթ կանչում.
Այն օրից եմ քեզ ճանաչում։

— Աղեն մի օր դուռը կտրած
Սպառնում էր պարտ-գյուղացուն.
Խեղճ աղքատը, ճարը հատած,
Ձայն էր տալիս վե՞ր — աստծուն.
— Խրղճա, փրրկի՞ր—ա՛ռ հոդիս, տե՞ր...
Այն օրի՞ց եմ ես քեզ ընկեր...

— Մի մարդ եկավ տոպրակն ուսին,
Տրկլոր մանչի թաթը բռնած.
— Մեզ խղճացեք սերն Հիսուսին,
Մեր աշխարհքից մենք հալածված,
Թափառական եղանք այսպես...
Այն օրի՞ց եմ ծանոթ ես քեզ...

...Եվ անցքերը պատմում է նա,
Համարում է նա, ու թիվ չրկա...[48]

Անշուշտ, մանուկ Թումանյանը նման շատ դեպքերի է ականատես եղել, քանի որ նրանց տունը գտնվում էր գյուղամիջում, որ ինչպես հայկական բոլոր գյուղերում, իրադարձությունների կենտրոնավայրն էր։

Իր ինքնակենսագրական նոթերում Թումանյանը գծագրել է գյուղական մի քանի տիպերի ուրվանկարը, որից երևում է նրանց տեղն ու դիրքը.

48 ԵԺ, I, 589—590։

«Քոչնանց Սիմոն[49]—միշտ ճիպոտը ձեռին, ուշունցով ու ծեծով, անասնված։ Նրա շրջանը։ Ջումանը — նրա մարդիկը։

Շաշ Դավոն, միշտ իշի վրա, ոտները գետնին քաշ տալիս. ոչինչ չուներ և միշտ գյուղի հանդի և այլն դարդն էր քաշում...

Առաջին անգամ իմ պրիստավ տեսնելը և Ղուլի բիձեն...»[50]։

Սոցիալական անհավասարության իր առաջին ընկալման մասին Թումանյանը պատմում է «Իմ ընկեր Նեսոն» պատմվածքում։ Նկարագրելով, թե ինչպես ուսման վարձը վճարելու հնարավորությունից զուրկ լինելով, իր խաղընկերների մի մասը գյուղական դպրոցից դուրս է մնում, նա ավելացնում է. «Առաջին անգամն էր, որ մեզ ջոկում էին իրարից... առաջին անգամն էր, որ մենք գլխի էինք ընկնում, թե մինս ունևոր ենք, մյուսս աղքատ։ Դեռ էսօր էլ ականջումս է Նեսոյի լացի ձենը, որ իրենց դռանը թավալ գալով գոռում էր, թե՝ ես էլ եմ ուզում ուսումնարան գնամ։ Եվ դեռ ականջումս է նրա հոր ձենը, որ կանչում էր. — «Կա ո՞չ, կա ո՞չ, ա՛յ ոչ ու փուչ, որտեղի՞ց տամ... Երեք մանեթ ունենամ՝ կտանեմ, հացի կտամ, կբերեմ կուտեք, հրես մնացել եք սոված նստած. կա ո՛չ...»[51]։

Այսպիսով, մանկությունը բանաստեղծի հոգում կուտակել է նաև տխուր. ճնշող պատկերներ ու տպավորություններ, որոնք պիտի իմաստավորվեին և գեղարվեստորեն մարմնավորվեին հետագայում։ Դեռ պատանի, ընկնելով քաղաք և խորթ միջավայրում վերհիշելով «սուրբ մանկությունը», նա պիտի տեսներ հայրենի շքեղ բնության և նրա մեջ ապրող ու տառապող ժողովրդի ցնցող հակապատկերը.

...Ահա կանգնած է իմ առաջ
Մեր բազմահոգ գյուղացին,
Մեծամարմին ու քաջալանջ,
Ծիծաղ չըկա երեսին...

Եվ պարզ աչքով ես տեսնում եմ
Հայրենիքս ծաղկավետ,
Այն ճոխ երկրից ես լսում եմ
Անհոգ ծիծաղ լացի հետ...[52]

---

49 Հավանորեն՝ «Խալարի մեջ» անավարտ գրամատիկական երկի գործող անձերից՝ Սատանանց Սիմոնի նախատիպը (հմմտ. ԵԺ, III, 429—445)։

50 ՊԲՀ, 1966, № 1, էջ 177։ Ինչպես երևում է Թումանյանի արխիվում պահպանված մի այլ թերթիկից, բանաստեղծը ծրագրած է եղել գրել Դավոյի կերպարը պատկերող պատմվածք։ Հիշյալ թերթիկում գրեթե կրկնվում է ինքնակենսագրական նոթերում նշվածը. «Դավոյի տիպը—մի բարձրահասակ, խելքապակաս, միշտ նստած յուր Մարիկոս էշի վրա։ Գյուղամիջումն էլ իշով է ման գալիս...» (ԹՐԱ)։

51 ԵԺ, III, 117—118։

52 «Հիշողություններ հայրենիքից» (ԵԺ, I, 45)։ Այս բանաստեղծության սևագրության մեջ կա մի անտիպ քառատող, որ չի բերված Թումանյանի երկերի գիտական հրատարակության ծանոթագրություններում.

Ա՛յ, մեր աղքատ հարևանի
Որդին տկլոր ու սալար,
Կտեր ծայրին կուշ եկած,
Լաց է լինում միալար։ (ԹՐԱ)։

Այս թռուցիկ դիտողությունները ինքնին հավաստում են, որ քննական հայացքը դեպի աշխարհի շարն ու բարին, Թումանյանի մեջ սկսել է արթնանալ վաղ պատանեկության օրերից։ Այդ է վկայում նաև սևագիր ոտանավորներից մեկի՝ «վաղուց զարթնած ու շատ տառապած» ինքնաբնութագրական տողը[53]։

Անցյալի հերոսական ասքերի ու լեգենդների հետ մեկտեղ, մանուկ Թումանյանը լսել է իր պապերի խուլ տրտունջը իրականությունից, որ նրանք արտահայտել են նույնիսկ իրենց ուրախության կարճատև պահերին, որպես օրհնություն և պատգամ՝ «Ապրեք, երեխեք, բայց մեզ պես չապրեք...»։

Թեև այդ տխուր օրհնության ողջ խորհուրդը ընկալվել է հետագայում, սակայն հենց այդ ժամանակ էլ, նա մանկան մատաղ հոգում նետել է տարակուսանքի առաջին սերմերը և նպաստել իրականության նկատմամբ քննական հայացքի արթնացմանը։

*

Թումանյանի առաջին ուսուցիչը, որից գրաճանաչություն է սովորել, կրտսեր հորեղբայրը՝ Գրիշկա բիձան (Գրիգոր Թումանյան, ծնված 1850) էր[54]։

Գրիշկա բիձու և նրա դպրոցի (ինչպես նաև Թումանյանի ուսումնառության սկզբնական շրջանի) վերաբերյալ մեր ունեցած տեղեկությունների սիակ աղբյուրը դարձյալ բանաստեղծի ինքնակենսագրական նոթերն են. «Գրիշկի մոտ... 1876 թվի կովի ժամանակ (նկատի ունի 1877—1878 թթ. ռուս-տաճկական պատերազմը — Ա. Ի.) մեր Գրիշկեն իր հոր թուրն ու խաչերն էր ուզում, որ գնա կռիվ... Իմ բիձա Գրիշկի դպրոցը. մեծ աշակերտներ. արճճի մատիտներ։ Ես ինչպես էի պտից թանաք նիփում։ Առաջին տետրերը (Այբբենարան), որ բերին Թիֆլիսից — կանաչ, դեղին, կարմիր — ճակատին՝ «Խաչ, օգնեա՛ ինձ»։ Գրիշկեն անհաջող խանութպան ու վարժապետ և լավ ձայնավոր տիրացու։ Խեղճ ու անշառ»[55]։

«Անհաջող վարժապետ» բնորոշումը հիմք է տալիս եզրակացնելու, որ ուսուցումը Գրիշկա բիձու դպրոցում անկանոն է եղել[56] և շուտով դադարել է։ Թումանյանն այդտեղ սովորել է մի քանի ամիս (հավանաբար՝ 1877/78 ուսումնական տարում), որից հետո մտել է Սահակ վարժապետի դպրոցը։

Սահակ Տեր-Հովհաննիսյանը Թումանյան ընտանիքի ազգականներից մեկի փեսան էր, նույնպես տիրացու։ Սահակ վարժապետի դպրոցի կազմակերպման նախաձեռնողը, ինչպես պատմում է Թումանյանը, եղել է իր մայրը։ Նա է խնդրել տիրացուին «գեղումը մնալ, երեխաներին կարդացնել»։ Առաջարկն ընդունվել է, պայմանով միայն, որ «իրեն պահեն»։ «Գյուղումն էլ տրամադրություն կար, և, մի քանի օրից հետո, տիրացու Սհակը դարձավ Սհակ վարժապետ։ Մի օթախում հավաքվեցին մի խումբ երեխաներ, տղա ու աղջիկ շար-

---

53 «Երանի նրան, ով որ քընած...» բանաստեղծության մեջ (ԵԺ, I, 488)։

54 ԳԱԹ, թա։ Մահվան թվականը հայտնի չէ։ 1919 թ. նա ողջ է եղել, ինչպես վկայում է Վ. Ահարոնյանը նույն թվականին, Թումանյանի ծննդյան 50-ամյակի առթիվ գրած «Հարազատ լեռների երգիչը» հոդվածում («Закавказское слово», 1919, № 27).

55 ՊԲՀ, 1968, № 1, էջ 175—179։

56 Մի առիթով անդրադառնալով Սահակ վարժապետի դպրոցին և այն համարելով առաջին «կանոնավոր ուսումնարանը» Դսեղում, Թումանյանն ավելացնում է՝ «Դրանից առաջ էլ կար, բայց ավելի անկանոն», որ, հավանաբար, վերաբերում է Գրիշկա բիձու դպրոցին (ԵԺ, IV, 196)։

վեցին երկար ու բարձր նստարանների վրա, եղավ ուսումնարան, և այստեղից սկսեցի ես իմ ուսումը»[57]։

Դսեղի հասարակությունը ի դեմս հոգաբարձուների, Սահակ վարժապետի հետ կնքում է պայմանագիր[58], պարտավորվելով նրան վճարել տարեկան 130 ռուբլի։ Համաձայն պայմանագրի, աշակերտների թիվը լինելու էր 35 հոգի։ Պետք է ենթադրել, որ աշակերտների այդ քանակը չի ապահովվել. մեր հիմքը Թումանյանի տվյալներն են. ըստ ինքնակենսագրության՝ «հավաքվեցին մի խումբ երեխաներ»[59], ըստ «Իմ ընկեր Նեսոն» պատմվածքի՝ «մի քսան-երեսուն երեխա»[60]։ Յուրաքանչյուր աշակերտի ուսման վարձը տարեկան 3 ռուբլի էր»[61]։

Թե Սահակ վարժապետն ինչ գիտելիքներ է տվել իր սաներին՝ հայտնի չէ։ Այդ մասին տեղեկություններ չի հաղորդում նաև Թումանյանը։ Ըստ երևույթին, նրա դպրոցին բանաստեղծի տված բնորոշումը («կանոնավոր») վերաբերում է ոչ թե ուսուցման որակին, այլ կազմակերպչական կողմին։ Իր «մանկավարժական» ըմբռնումներով Սահակ վարժապետը տեր-Թոդիկի երկվորյակն էր. «Մեր Սահակ վարժապետը,— պատմում է Թումանյանը,— մեզ կառավարում էր «գավազանաւ երկաթեաւ»։ Իր երկաթե գավազանը, որ հրացանի շամփուրի էր նման, երբեմն ծռում էր երեխաների մեջքին, ականջները «քոքըհան» էր անում և մեծ կաղնենի քանոնով «շան լակոտների» ձեռների կաշին պլոկում։ Ես չեմ կարողանում մոռանալ մանկավարժական այդ տեռորը»։ «Անաստված ծեծի» ահից աշակերտներից մեկը նույնիսկ տանից ու գեղից փախչում է[62]։

Սահակ վարժապետի դպրոցում Թումանյանը սովորում է մեկ տարուց ոչ ավելի (1878—79 ուս. տարում)[63], որից հետո սկսվում է նրա ուսումնառության երկրորդ շրջանը Ջալալօղլում։

*

Դպրոցական առաջին մեկ-երկու տարին, ինչպես և հետագա տարիները, Թումանյանին գիտելիքների մեծ պաշար չտվին։ Սակայն դպրոցից նա ստացավ այն նվազագույնը, որ անհրաժեշտ էր բորբոքելու իմացության ծարավը և մղելու ինքնազարգացման ուղին։ Եվ ինքնազարգացումը Թումանյանն ըսկըսել է քարեղեն մատյանների ընթերցումով, որ առատորեն սփռված են Դսեղի շրջակայքում՝ կազմելով հայրենի բնանկարի մի անբաժան մասը։

---

57 ԵԺ, IV, 86։

58 Թումանյանն այդ պայմանագիրը համարել է իր համար շատ սիրելի մի հին դոկումենտ (ԵԺ, VI, 196)։ Պայմանագիրը տե՛ս ԳԱԹ, Թա, № 1722։

59 ԵԺ, IV, 86։

60 ԵԺ, III, 117։

61 Նույն տեղում։

62 ԵԺ, IV, 86—87։

63 Թումանյանը հիշում է՝ «Մի-երկու տարի մեր գյուղի ուսումնարանումը կարդալուց ետը հերս ինձ տարավ մեր կողմերի գյուղաքաղաքը... («Իմ ընկեր Նեսոն»)։ Անշուշտ, նա հաշվում է նաև Գրիշկա բիձու դպրոցում սովորած ամիսները։ Եթե նկատի ունենանք Դսեղի հասարակության և Սահակ վարժապետի միջև կնքված պայմանագրի թվականը (1879), մեկ տարի էլ չի կազմում, քանի որ նույն թվականի ուշնանը Թումանյանն ընդունվել է Ջալալօղլու դպրոցը։ Պետք է ենթադրել, որ պայմանագիրը ստորագրվել է պարապմունքներն սկսվելուց ամիսներ հետո։

Էս տախտի վերա աղոթում մի վանք,
Էն ժայռի գլխին հրսկում է մի բերդ...
Իսկ քարի գլխից, լուռ մարդու նման,
Նայում է ձորին մի հին խաչարձան[64]։

Այդ հուշարձանները խոսուն վկաներն էին հերոսական անցյալի, որ քաջակորով ոգի էին ներշնչել Թումանյանի նախնիներին։ Աբովյանն իր դյուցազներգական վեպում պատմելով լոռեցիների, մասնավորապես Մեհրաբ և Օվագիմ յուզբաշիների սխրագործությունները, ավելացնում է. «Ա՜խ, ինչ տեղ են կենում, որ էսպես չանեն, էս սիրտը չունենան... Ամեն քար նրանց համար գիրք ա, ամեն հին բերդ, քանդված մատուռ կամ եկեղեցի, որ սար ու ձոր լիքն են էստեղ՝ նրանց համար կենդանի վարժապետ։ Ամեն գերեզման, ամեն արձան նրանց համար կենդանի վկա ու պատմագիր։ Լոռվա անառիկ բերդը, Մանահնա և Հախպատա վանքերի պատերը, տաճարները, սրահները՝ նրանց համար վարժատուն...»[65]։

Լոռու պատմական հուշարձաններն իրենց արձանագրություններով, խոր ազդեցություն են գործել Թումանյանի վրա, ինչպես խոստովանել է ինքը զրույցներից մեկում[66], իսկ ինքնակենսագրական նոթերում նշել է. «Հասան-Ջալալյանի «Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան». սեր դեպի արձանագրությունները և արձանագրելը պատերի վրա»[67]։

Լեոն նշում է պատմական հիշատակարանների (հուշարձանների) «ահագին դաստիարակչական ազդեցությունը» Թումանյանի «վաղ մանկության և պատանեկության օրերում», նրա «ոգեշունչ սերը դեպի հնագիտությունը»[68]։ Պետք է ավելացնել նաև՝ դեպի պատմությունն ու ազգագրությունը։

Թումանյանը քանիցս անդրադարձել է Լոռու, մասնավորապես Դսեղի պատմական հուշարձաններին և ավանդություններին՝ «Մի ավանդություն» (1887)[69], «Բարձրաքաշ ս. Գրիգորի վանքը» (1897)[70] հոդվածները, «Բորչալվում» ուղեգրական ակնարկը (1894)[71], «Քաջերի կյանքից» պատմական պատկերը (1894)[72], որոնք սերտորեն կապված են նրա մանկական և պատանեկան տարիների տպավորությունների հետ և հետագա պատմական ուսումնասիրությունների նախաքայլերն են հանդիսանում։

*

Թումանյանի ստեղծագործությունների (հատկապես պոեմների և արձակի) մի զգալի մասը մանկական-պատանեկան տպավորությունների վերապրում-

---

64 ԵԺ, II, 11—12։

65 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. III, էջ 93։

66 ՀՁ։

67 ՊԲՀ, 1966, № 1, էջ 110։

68 Լեո, Հիշողություններ Հովհաննես Թումանյանի մասին։ «Նորք», 1923, գիրք 3, էջ 247—248։

69 Հայկ. ՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտություններ), 1963, № 12, էջ 69—73։

70 «Արաքս», 1897, գիրք Բ, էջ 47—49։ «Բանբեր Երևանի համալսարանի», 1968, № 2, էջ 161—163։

71 ԵԺ, VI, 53—70։

72 ԵԺ, III, 25—34։

ներ են։ «Ահմադը»[73], «Մայրը», «Իմ ընկեր Նեսոն» պատմվածքներն ամբողջությամբ ներկայացնում են բանաստեղծի մանկության առանձին դրվագները։ «Մարոն», «Լոռեցի Սաքոն», «Անուշ» պոեմներում և «Գիքորը» պատմվածքում, առավել կամ նվազ չափով, օգտագործված են «կյանքի անդրանիկ հուշերը», «սիրելի դեմքերը», տեսած ու լսած դեպքերը, ապրած հոգեվիճակները, որոնք բանաստեղծի կախարդական գրչի զորությամբ վերակենդանանալով, «լցրել են պոետի հաճույքը վսեմ»։

«Մարոն» պոեմի հերոսուհին Թումանյանի մանկության ընկերն է, և բանաստեղծը պատմությունը վարում է որպես դեպքերին ականատես (առաջին տարբերակում պատմում է քույրերից լսածը՝

...Իմ քույրերս նրա մասին
Այսպիսի բան ինձ ասին)[74]։

Այսպես թե այնպես՝ պոեմի նյութը մանկության օրերին պատահած իրական դեպք է։ «Իմ մի քանի գրվածքների բացատրությունը» գրառումներում նշված է հերոսուհու նախատիպը՝ «Զուռնաչի Սաքոյի աղջկա պատմությունը և «Մարոն»[75]։ «Լոռեցի Սաքոյի» նախատիպի մասին հիշատակություն կա ինչպես նույն գրառումներում («Ռամազի Մաթոսը և Լոռեցի Սաքոն»), այնպես էլ ինքնակենսագրական նոթերում («Մաթոսի խելագարությունը — Լոռեցի Սաքոն»)[76]։

Այսպես՝ ինքնակենսագրական նոթերի մի թերթիկում կարդում ենք. «Քարափներ բարձրանալը, ձոր գնալը։ Կնանիքը մեզ վախեցրին իբրև քաջքեր»։ Մի այլ թերթիկում (թերևս սույն դեպքի կրկնված գրառումը) «Տան տակի ձորը—էրերում <այրերում>, որ ծղրտում էինք, ու քաջքերը ձեն էին տալիս (Սալոմը, Խանումը և մյուս կանայք քարափի գլխին)»[77]։

«Լոռեցի Սաքոյի» հիշյալ հատվածի հետ առնչվում են նաև «Դարձ» անավարտ պոեմի այն տողերը, որ վերաբերում են Սուրենի մանկության հուշերին (հիշենք, որ Սուրենի կերպարը գծելիս Թումանյանը նկատի է ունեցել իրեն).

Գիշերներն անքուն նա մտածում էր
Ձարերի վրա...
(Եվ թեև սրտում) չարերի ահը,
Սիրում էր անչափ զենքն ու զրահը...
Եվ երկնքից ընկած լուսնի շողի տակ
Մի քաջք խաղում է ահա...'[8]

---

73 Ահմադի նախատիպի անունը եղել է Սմեյիլ (ՊԲՀ, 1966, № 1, էջ 176, 185)։

74 ԵԺ, II, 292։

75 ՊԲՀ, 1966, № 1, էջ 183։

76 Նույն տեղում, էջ 176։ Փակագծերում Թումանյանն ավելացրել է՝ «Ջալալօղլի էի ես էլ ժամանակ, թե՞ Թիֆլիս»։ Ըստ այդմ՝ դեպքը տեղի է ունեցել բանաստեղծի աշակերտության տարիներին, 1880-ական թվականների սկզբներին։

77 ՊԲՀ, 1966, № 1, էջ 176, 180։

78 Թ I, 302։

Այս բոլորին պետք է ավելացնել նաև բանաստեղծի դպրոցական ընկեր Մելքոն Ասլիբեկյանի հուշերի հետևյալ հատվածը, որ կարևոր նշանակություն ունի Թումանյանի պոեմի ստեղծագործական պատմության համար. «Մեր մանկության օրերից մեկում, — գրում է նա, — գասամիջոցին պատմում էր <Թումանյանը>, թե ինչպես երեխա ժամանակ գլուխը տատի ծնկանը դրած լռությամբ լսում էր տատի պատմած սատանայի նկարագրությունը... Վերջերն ինքն ասում էր, որ տատիս պատմածների արդյունքն է «Լոռեցի Սաքոն»[79]։

Պոեմի, հատկապես առաջին և երկրորդ տարբերակներում, բնության հոյակապ նկարագրությունները (օրվա տարբեր պահերին), հովվական կենցաղի գունագեղ պատկերները, անշուշտ, վերապրումներն են բանաստեղծի այն տպավորությունների, որ նա ստացել էր պատանեկան հասակում հովիվների հետ անցկացրած օրերից ու գիշերներից[80]։

«Անուշ»-ի սյուժեի հիմքում ևս ընկած է Թումանյանի մանկության տարիներին կատարված մի դեպք, որը և նշված է հայտնի «Բացատրության» մեջ. «Դևոյի, Ալեքի, Օսմանի և այլն աղջիկ փախցնելը և «Անուշը»-ը[81]։

Այդ փաստը հաստատվում է նաև պոեմի առաջին տարբերակի հետևյալ տողերում.

Ես այն սարերումն էի երեխուց.
Այնտեղ տարփում էր մի զույգ սիրահար.
(Նրանցից մեկը մեռած է վաղուց,
Մյուսն ազոթում է մեռնելու համար)[82]։

Պոեմի առանձին մասերում (Համբարձման տոնին և հարսանիքին նվիրված հատվածները), անկասկած, առկա է Թումանյանի՝ մանուկ օրերում տեսածի ու լսածի գեղարվեստական վերհուշը, որի հաստատումը գտնում ենք նույն ինքնակենսագրական նոթերում. «...Գյուղի հարսանիքը... իմ մորաքույր Սաչլուն, իր հասակակից աղջիկները և Համբարձումը»[83]։

Թեև «Գիքորի» սյուժետային կմախքը կազմող կենսական փաստը վերաբերում է 90-ական թվականների սկզբներին[84], սակայն պատմվածքի հոգեբանական դրվագներից մի քանիսի հիմքը մանկական տպավորություններն ու ապրումներն են։

---

79 ԳԱԹ. Թա։

80 Ինքնակենսագրական նոթերի հետևյալ նշումները՝ «Սար։ — Շվին, խաղը, բայաթին, հանկարծակի փոթորիկը, կայծակներն ու գոդի վրա տալը» (ՊԲՀ, 1966, № 1, էջ 180) հմմտ. պոեմի համապատասխան էջերի (ԵԺ, II, 308—310) հետ։

81 ՊԲՀ, 1966, № 1, էջ 183։

82 ԵԺ, II, 325։

83 ՊԲՀ, 1966, № 1, էջ 177, 178։

84 1916 թ. հունվարին, մի զրույցի ժամանակ Թումանյանը հաստատել է, որ «Գիքորը» գրել է 1894 թ., և որ դա իրական դեպք է, պատահած իր ազգականներից մեկի երեխային։ Նրան «Դսեղից բերել էին Թիֆլիս մի բազգի տալու էդպես էլ նրա կյանքը վերջացավ» (ՀՁ)։

Օլգա Թումանյանի պատմելով, բանաստեղծի հորեղբայր Մամի տղային գյուղից Թիֆլիս են տանում, ուր նա հիվանդանում է. փոխադրում են հիվանդանոց. Թումանյանը գնում է տեսության։ Տղան վիրահատությունից հետո վախճանվում է։ Այս դեպքը ծանր տպավորություն է գործում բանաստեղծի վրա. «Ներեք օր հաց չկերավ»։ Ըստ տիկ. Թումանյանի, այդ է եղել «Գիքորի» իրական հիմքը։

Թումանյանը, ինչպես վկայում է Ստ. Լիսիցյանը, խոստովանել է, որ Գիքորի ապրումների մեջ մտցրել է «այն թախիծը, որ ինքը զգացել է մանուկ հասակում Լոռուց Թիֆլիս ընկնելով»[85]։

Բնորոշ է նաև մի այնպիսի «մանրուք», ինչպիսին գյուղացի Համբոյի կովի անուն է (Ծաղիկ)։ Ինքնակենսագրական նոթերում Թումանյանը հիշատակել է, որ այդպես է եղել իրենց կովի անունը. «...Մեր կարմիր կովը (կարծեմ Ծաղիկ)»[86]։

Հայտնի է, որ «Հառաչանք»-ի կենսական հիմքը ևս Թումանյանի մանկության տարիներին պատահած դեպքերն են, իր լսածն ու տեսածը, ինչպես նշված է «Իմ մի քանի գրվածքների բացատրության» մեջ («Ղոխնանց պապին, մեր գյուղի Զոփուրի տղերքը և «Հառաչանք» պոեմը»)[87], և ինչպես վկայում են ժամանակակիցները[88]։ Ղոխնանց պապը՝ «ծեր այգեպանը» պոեմի ծերունու նախատիպն է, որին, նաև Զոփուրի տղաներից ամենակրտսերին՝ Ռամազին, պատանի բանաստեղծն անձամբ ճանաչել է և հեռները զրուցել[89]։

«Քաջերի կյանքից» պատմա-ավանդական զրույցն ստեղծելիս, Թումանյանն անկասկած նշանակալի չափով օգտագործել է մանկության օրերին իր տատերի և համագյուղացի ծերերի պատմածները։

Թումանյանի սևագրություններից երևում է, որ նա մտադիր է եղել մանկության տպավորությունների հիման վրա գրել նոր երկեր (հատկապես արձակ), մեկ-երկուսն էլ սկսել է, թողել անավարտ, մյուսները մնացել են սոսկ որպես մտահղացումներ։

## ДЕТСТВО ТУМАНЯНА

А. М. ИНДЖИКЯН

**Резюме**

Статья (отрывок из монографии) охватывает детские годы Туманяна в родном селе Дсех (1869—1879) до начала учебы в школе Т. Тер-Давтяна в селе Джалалоглы.

На основании автобиографических записей поэта, архивных документов, воспоминаний родных и современников, автор показывает роль тех факторов (окружающая среда, социально-бытовые картины сельской жизни, природа, исторические памятники, предания, фольклор), под воздействием которых начал формироваться духовный мир будущего поэта.

Автор статьи останавливается также на автобиографических произведениях, подчеркивая значение детских впечатлений, которые оказали влияние на их создание, уточняет некоторые факты из биографии Туманяна.

85 ԳԱԹ, Թա։

86 ՊԲՀ, 1966, № 1, էջ 175։

87 Նույն տեղում, էջ 153։

88 ԳԱԹ, Թա (Սիմ. Հովվյանի հուշերը)։

89 Նույն տեղում։